ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն

Սամվել Մարգարյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Հունգարիա, Բուդապեշտ, 2017 թ. սեպտեմբերի 11-13

4. Հրավիրող կողմը

Առողջապահության Համաշխարհային Կազմակերպություն (ԱՀԿ)

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային կոմիտեի 67-րդ նիստին

6. Քննարկված թեմաները

Նիստի շրջանակներում քննարկվեցին ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանային գրասենյակի հետ հետագա համագործակցության ուղղությունները, «Առողջություն-2020» եվրոպական քաղաքականության իրականացման, ինչպես նաև կայուն զարգացման ոլորտի նպատակներին հասնելու գործում ԱՀԿ անդամ-երկրների կողմից իրականացված աշխատանքները և արձանագրված առաջընթացը, ինչպես նաև անդամ-երկրների միջև հետագա համագործակցությունը շրջակա միջավայրի և առողջության պահպանման, առողջապահական ներուժի զարգացման, դեղերի հասանելիության բարելավման, բժշկասանիտարական կանոնների ներդրման գործընթացի խթանման և այլ ոլորտներում:

Քննարկվեցին նաև ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային կոմիտեի նախորդ նիստից հետո վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների, հանրային առողջապահության, առողջապահության ֆինանսավորման բարելավման և այլ

ուղղություններով երկրների կատարած աշխատանքները, դրանց արդյունքներն ու զարգացման հեռանկարներն առաջիկա ժամանակահատվածի համար:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Նիստին մասնակցում էին ԱՀԿ եվրոպական տարածաշրջանի անդամ-երկրների առողջապահության նախարարության բարձրաստիճան պաշտոնյաներ, միջազգային մակարդակում ճանաչված փորձագետներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, դիտորդներ և այլն:

Նիստի ժամանակ հանդես եմ եկել հայտարարությամբ՝ ներկայում Հայաստանում ընթացող Եվրասիական տնտեսական միության նորմերին և կարգավորումներին դեղերի գրանցման ոլորտի հարմոնիզացիայի պրոցեսի վերաբերյալ և հրավիրել եմ ԱՀԿ-ին մասնակցելու այդ պրոցեսին, նշելով, որ դեղերի շրջանառությունը կարգավորող ոլորտի հարմոնիզացիան մեծ նշանակություն կունենա ԵԱՏՄ բոլոր անդամ-պետությունների համար և այս գործում մենք շատ կարևորում ենք ԱՀԿ խորհրդատվական դերը:

ՀՀ առողջապահության նախարարությունը պատրաստվում է նոր երկամյա համաձայնագիր ստորագրել ԱՀԿ հետ 2018-2019 թ.թ. համար, որի դրույթները նույնպես հստակեցվեցին միջոցառման շրջանակներում:

Նիստի շրջանակներում կազմակերպվել էր նաև աշխատանքային հանդիպում, որի ժամանակ ԱՀԿ առողջապահության և հանրային առողջության համակարգերի բաժնի տնօրենի հետ քննարկվեցին Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում իրականացվող տուբերկուլոզի և դեղակայուն տուբերկուլոզի դեմ պայքարի միջգերատեսչական ծրագրի իրականացման և վերջինիս շրջանակներում հետագա համագործակցության հարցերը:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Մասնակցել եմ ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային կոմիտեի 67-րդ նիստին կայացած ԱՀԿ Գործադիր խորհրդի և ԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանային կոմիտեի մշտական կոմիտեի ընտրություններին:

9. Գործուղվողը

Սամվել Մարգարյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

19 սեպտեմբերի 2017 թ.